

**ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մինասյան Անուշ

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերը և դրանց նվիրված Անանուն հեղինակի մեկնությունները¹ հայերեն են թարգմանվել դեռևս VI դարում, նույն ժամանակաշրջանում է ստեղծվել նաև «Կատեգորիաների»՝ Դավիթ Անհաղթի մեկնությունը²։ Այնուհետև ութ դար շարունակ արիստոտելյան այս տրամաբանական աշխատությունները դասավանդվել են միջնադարյան Հայաստանի եկեղեցիներին կից կրթական հաստատություններում։ XIV դարում Արիստոտելի երկերի ընդհատված մեկնողական ավանդույթը վերածնվում է, ստանում է «երկրորդ շնչառություն», և Ստագիրացու այս տրամաբանական աշխատությունները կրկին հայտնվում են դարաշրջանի խոշոր մտածողների ուշադրության կենտրոնում։

Դեռևս XIII դարում Կիլիկյան Հայաստանում ի հայտ են գալիս արիստոտելյան աշխատություններին նվիրված Վահրամ Բաբունու մեկնությունները³, որոնք հիմնականում կոչված էին ծառայելու կրթական նպատակների։ XIV դարում բուն Հայաստանում ստեղծվում են Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերին նվիր-

¹ Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի, Յաղագս մեկնութեան Պերիարմենիաս // Մատենագիրք հայոց, ԺԷ հատոր, ԺԱ դար, Յաւելուած, Եր, 2016, էջ 883-979, 796-882։

² Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի // Դավիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք։ Համահավաք քնն. բնագրերը և առաջաբանը Ս.Ս. Արևշատյանի, Ե., 1980, էջ 195-225։

³ Վահրամ Բաբունի, Լուծմունք «Ստորոգութեանցն» Արիստոտելի։ Համահավաք քննական բնագիրը, թարգմ. գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագր. Գ.Հ. Գրիգորյանի, խմբ. Ս.Ս. Արևշատյանի. Երևան, 1967։ Լուծմունք Պերի արմէնի Վահրամայ, ՄՄ, Զ. 1683, էջ 116ա-143բ։

ված՝ կաթոլիկ քարոզիչ Պետրոս Արագոնացու (մահ. 1347թ.)⁴, իսկ դրանից անմիջապես հետո՝ հայ նշանավոր հոգևոր գործիչ, փիլիսոփա և մանկավարժ Հովհան Որոտնեցու (1315-1388 թթ.) մեկնությունները⁵:

Հայ տրամաբանական մտքի ուսումնասիրության տեսանկյունից մեծ կարևորություն ունեցող այս իրողություններն ունեն նաև իրենց պատմամշակութային ենթախորքը:

XIII դարում Հայաստանում սկիզբ առած կաթոլիկ քարոզչությունը իր զարգացման գագաթնակետին է հասնում XIV դարում՝ լատին եկեղեցական գործիչներ և աստվածաբան մտածողներ Բարդուղիմեոս Բոլոնացու (Մարաղացի, մահ. 1333թ.) և Պետրոս Արագոնացու ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ: Իրենց գաղափարները Հայաստանում սփռելու, կրոնական – մշակութային ազդեցությունն ուժեղացնելու և մեծ թվով համախոհներ գրավելու համար կաթոլիկ քարոզիչներն իրենց հայ գործընկերների՝ միարարների կամ ունիթորների⁶ աջակցությամբ, տեղում ծավալում էին նաև մանկավարժական և գրական լայն գործունեություն: Վերջինս ընդգրկում էր արևմտաեվրոպական հայտնի հեղինակների՝ ինչպես աստվածաբանական, դավանաբանական, ծիսական բնույթի, այնպես էլ իմաստասիրական, տրամաբանական, բարոյագիտական ուղղվածության երկերի թարգմանություններ, ինչպես նաև՝ ինքնուրույն աշխատություններ ու մեկնություններ⁷:

Ակադեմիկոս Ս.Ս. Արևշատյանը, XIV դարում մեծածավալ լատինական թարգմանությունների ի հայտ գալը գնահատում է որպես «խոշոր ճեղքում դեպի համամարդկային մշակույթի հոգևոր արժեքները», իսկ հայ իրականության մեջ կաթոլիկ քարոզչական գործու-

⁴ **Պետրոս Արագոնացի**, Համառոտ վերլուծություն Ստորոգութեանց Արիստոտելի, ՄՄ, Ձ. 1684, էջ 37ա-108բ: Պետրոս Արագոնացի, Սկիզբն վերլուծութեան ի վերայ գրոցն, որ կոչի Պերի արմենիաս, նույն տեղում, էջ 151ա-238ա:

⁵ Տե՛ս **Յովհաննու Որոտնեցու** վերլուծություն «Ստորոգութեանց» Արիստոտելի: Հավաքական տեքստը, առաջաբանը և ծանոթագր. Վ.Կ. Չալոյանի, թարգմ. Ա.Ա. Արամյանի և Վ.Կ. Չալոյանի, խմբ. Ս.Ս. Արևշատյանի, Ե., 1956: Յովհաննու Որոտնեցու համառոտ լուծմունք Պերի արմենիաս գրոցն: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագր. Ա.Ա. Մինասյանի, Ե., 2014:

⁶ Լատիներեն՝ unio-միասնություն, միացում բառից:

⁷ Աշխատությունների ցանկը տե՛ս **Մ. Ա. Ուդենրիյն**, Հայ-դոմինիկեան մատենագիտական ծանոթագրություններ, «Բազմավեպ», էջ 138-139, 229-231:

ներության երկակի նշանակությունը բնութագրում է այսպես. «Եթե հասարակական - քաղաքական տեսակետից լատինական թարգմանական գրականությունը ծառայել է կաթոլիկ եկեղեցու շահերին և բացասական դեր է խաղացել՝ թուլացնելով հայ ժողովրդի ազգային-հոգևոր միասնությունը, ապա մշակութային - մտավոր առումով այն հիմնականում ունեցել է դրական նշանակություն՝ միջնադարյան հայ մատենագիրներին ծանոթացնելով արևմտաեվրոպական մտքի հոսանքներին, փիլիսոփայական այն անողոք վեճերին ու պայքարին, որոնց մեջ ներգրավված էր կաթոլիկական Արևմուտքը»⁸:

Ելնելով վերոնշյալ իրողություններից՝ Արիստոտելի փիլիսոփայական ժառանգության հետազոտողներից Վ.Պ. Զուբովը, անդրադառնալով Արիստոտելի երկերի հայ մեկնություններին, գրում է. «XIV դարի այս հայ փիլիսոփաների (խոսքը Հովհան Ռոտունեցու և Գրիգոր Տաթևացու մասին է՝ Ա.Մ.) ստեղծագործությունների ուսումնասիրությունը ձեռք է բերում առանձնահատուկ հետաքրքրություն, եթե հիշենք, որ դրանք ստեղծվել են սուր բանավեճի իրավիճակում՝ արևմտաեվրոպական (թոմիստական) արիստոտելականության ներթափանցման պահին»⁹:

Այս համատեքստում պակաս կարևոր չէ հենց կաթոլիկ միսիոներների գրական ժառանգության ուսումնասիրությունը, ինչը թույլ կտա գործնականում պարզել, թե նրանց աշխատություններում ինչ նոր ու թարմ գաղափարներ են շրջանառվում, վերլուծության և փաստարկման ինչպիսի մեթոդներ են կիրառվում: Այլապես դժվար կլինի պատկերացնել «արևմտաեվրոպական արիստոտելականության»՝ հայ հոգևոր մշակույթ ներթափանցելու ձևերն ու եղանակները: Այդ նպատակով սույն հոդվածում ուսումնասիրության առարկա են դարձել Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» տրամաբանական երկերին նվիրված Պետրոս Արագոնացու աշխատություններում կիրառվող մեկնաբանական եղանակներն ու մեխանիզմները:

Պետրոս Արագոնացու այս զույգ մեկնություններից յուրաքանչյուրը բաղկացած է քսանմեկ գլխից կամ մեկնողական հատվածից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին, կազմված է երեք բաժնից:

⁸ Аревшатын С.С. К истории философских школ средневековой Армении (XIV в.). стр. 27, 29.

⁹ Зубов В.П., Аристотель, М., 2000, стр 212.

Առաջին բաժնում մեկնիչը արիստոտելյան բնագրի մեկնվելիք հատվածում՝ ըստ մեկնաբանվող թեմայի բովանդակության և ուսումնասիրության մեթոդի, կատարում է կառուցվածքային բաժանումներ՝ սկսելով ամենաընդհանուրից՝ Ստագիրացու երկից, ապա մաս առ մաս բաժանելով՝ ընդհուպ հասնում է մինչև առանձին դրույթները:

Երկրորդ բաժինը սկսվում է «Արդ ասէ...» արտահայտությամբ և պարունակում է նախորդ բաժնում առանձնացված արիստոտելյան դրույթների հաջորդական ներկայացումը և դրանց բացատրությունն ու պարզաբանումը: Որոշ դեպքերում Արագոնացին այս բաժնում ոչ միայն ներկայացնում և պարզաբանում է արիստոտելյան նյութը, այլև վերլուծում է այն:

Սակայն բուն վերլուծական բաժինը երրորդն է¹⁰, որը սկսվում է «Շուրջ զմասամբս զայս խնդրիս» կամ նմանատիպ դարձվածքներով և կազմված է հարց-պատասխանի ձևով: Այս բաժնում Արագոնացին Արիստոտելի կողմից քննվող հասկացությունների և հիմնախնդիրների բովանդակության, կարգի, դասավորության, հիմնավորվածության, դրանց շուրջն առկա այլակարծությունների վերաբերյալ առաջադրում է բազմաթիվ հարցադրումներ և յուրաքանչյուրին տալիս է կոնկրետ մեկնաբանություն՝ դրսևորելով իր քաջատեղյակությունը՝ իմաստասիրական-տրամաբանական հիմնահարցերի շուրջ գրականության մեջ ընթացող բանավեճներին:

Արագոնացու մեկնությունների երրորդ բաժնում առաջադրված և քննության առարկա դարձած հարցադրումներն՝ ըստ իրենց վերաբերության, կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

I. Հարցեր, որոնք վերաբերում են արիստոտելյան երկերում արտահայտված տրամաբանական թեզերի հիմնավորվածությանը:

Այս շարքի հարցապնդումներում վիճարկվում են Արիստոտելի՝ տվյալ երկում առաջադրված տրամաբանական հիմնադրույթները՝ դրանցում հակասությունների և ձևական տրամաբանական կանոնների խախտումների «բացահայտումների» միջոցով: Հարցերը կարող են վերաբերել.

¹⁰ Ի դեպ, «Պերի արմէնիասի»՝ Պետրոս Արագոնացու մեկնության մեջ, մանավանդ դրա երկրորդ գրքում (11, 12, 13, 14, 15, 19 պրակներ), հաճախ բացակայում է երրորդ՝ վերլուծական բաժինը: Դա բացատրվում է բնագրի այս մասում գերազանցապես նեղ ձևական տրամաբանական խնդիրների արծարծմամբ, որոնք քիչ տեղ են թողնում տարակարծիք ըմբռնումների և մեկնաբանությունների համար:

1) *արիստոտելյան հիմնադրույթի և իրական երևույթների կամ փորձի անհամապատասխանությանը* («Ասում է <Արիստոտելը>, որ առանց ենթակայի չի կարող լինել պատահական <հատկանիշ>: Ընդդեմ՝ խնձորի հոտը պահպանվում է ամանում՝ այն վերցնելուց հետո, հետևաբար՝ կարող է պատահական հատկանիշը լինել առանց իր ենթակայի»¹¹ և այլն),

2) *մեկնվող թեզի՝ արիստոտելյան այլ հիմնադրույթներին հակասելուն* («Երկմտելի է այն, որ <Արիստոտելն> ասում է, որ կապով կամ տրոհությամբ է <որոշվում> ճշմարիտն ու սխալը. ընդդեմ՝ <Արիստոտելն> ասում է «Կատեգորիաներ» գրքում, որ ըստ այնմ, թե իրը գոյություն ունի կամ ոչ՝ խոսքը կկոչվի ճշմարիտ կամ սխալ, հետևաբար՝ ըստ իրի է <որոշվում> ճշմարիտն ու սխալը, և ոչ՝ կապով կամ տրոհությամբ»¹² և այլն),

3) *Արիստոտելի և այլ փիլիսոփաների տեսակետների հակադրությանը* («Կարծես թե այս գիրքը չի վերաբերում տրամաբանությանը, քանի որ, ինչպես կարծում է Բոեցիուսը, տրամաբանական գիտությունը բաժանվում է հետազոտական արվեստի և դատողական արվեստի, իսկ այս գրքում չի խոսվում հետազոտականի և դատողականի մասին, հետևաբար՝ չի վերաբերում տրամաբանությանը»¹³ և այլն),

4) *արիստոտելյան դրույթի՝ քրիստոնեական աշխարհընկալմանը հակասելուն* («<Արիստոտելն> ասում է, որ եթե վերանա կենդանի <էակը>՝ չի լինի իմացությունը, ընդդեմ գրում է <Աստվածաշունչը>՝ դեռ չկար որևէ կենդանի <էակ>, սակայն կար Աստծու իմացությունը»¹⁴ և այլն),

5) *արիստոտելյան հիմնադրույթի հակասականության բացահայտմանը՝ այն վիճարկող հակափաստարկի առաջադրմամբ* («<Արիստոտելն> ասում է, որ խոսքը նշանակում է ոչ <այնպես>, ինչպես գործիքը. ընդդեմ՝ ինչպես սղոցի միջոցով կտրում ենք, նմանապես խոսքի միջոցով բացահայտում ենք մտքի կրածը (պարունակությունը), հետևաբար՝ խոսքը նշանակում է <այնպես>՝ ինչպես գործիքը»¹⁵ և այլն),

¹¹ Համառոտ վերլուծություն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 44բ:

¹² Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերի արմենիաս, էջ 158բ-159ա:

¹³ Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերի արմենիաս, էջ 152բ-153ա:

¹⁴ Համառոտ վերլուծություն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 75բ:

¹⁵ Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերի արմենիաս, էջ 171բ-172ա:

6) Արիստոտելի կողմից հասկացությունների սահմանումներում տրամաբանական կանոնավորության խախտմանը («Կարծես թե <խոսքի> սահմանումը բարվոք չի տրվել, քանի որ ցանկացած սահմանում պետք է տրվի ըստ մերձավոր սեռի՝ ինչպես ասում է փիլիսոփան, սակայն այստեղ այդ ձևով չի տրվել, քանի որ այս սահմանումը կարող է տարածվել կատարյալ և անկատար խոսքի վրա...»¹⁶ և այլն),

7) Արիստոտելի կողմից հասկացությունների բաժանումներում տրամաբանական կանոնավորության խախտմանը («Կարծես թե այս բաժանումը բարվոք չէ, որովհետև ցանկացած բաժանում պետք է լինի երկանդամ, քանի որ յուրաքանչյուր պատշաճ բաժանում արվում է հակադրության միջոցով, և հակադիր է միայն մեկը, հետևաբար՝ սխալվում է <Արիստոտելը> կատարելով քառամասնյա բաժանում»¹⁷ և այլն):

II. Հարցեր, որոնք վերաբերում են արիստոտելյան երկի կառուցվածքի և շարադրման առանձնահատկություններին:

Այս խմբում ընդգրկված հարցադրումները միջնադարյան մեկնողական ավանդույթի և սխոլաստիկական մտածողության համատեքստում մեծ կարևորություն են ստանում: Դրանք կարող են վերաբերել.

1) *հասկացությունների կամ հիմնախնդիրների առաջադրման կարգին՝ դասավորությանը, նախադասությանը կամ վերջադասությանը*, («Ինչու <Արիստոտելը> նախ փաղանունը չառաջադրեց և ապա՝ հոմանունը»¹⁸ կամ՝ որակ կատեգորիայի տեսակներից «ինչու առաջին երկու տեսակները նախադասեց հաջորդ երկուսին»¹⁹ և այլն),

2) *քննվող հասկացությունների կազմին և թվին, դրանց ընտրությանը* («Ինչու սեռերը տասն են՝ և ոչ ավելի, և ոչ սակավ»²⁰ և այլն),

3) *ներածության բացակայությանը, ձևակերպումների և շարադրության այլ առանձնահատկությունների* («Ինչու՞ փիլիսոփան այս գրքին չառաջադրեց նախերգան...»²¹, «Քանի որ դատողությունը բա-

¹⁶ Նույն տեղում, էջ 171բ:

¹⁷ Համառոտ վերլուծություն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 44բ:

¹⁸ Նույն տեղում, էջ 40ա:

¹⁹ Նույն տեղում, էջ 85ա:

²⁰ Նույն տեղում, էջ 45բ:

²¹ Նույն տեղում, էջ 40ա:

Ժանում է պարզի ու բաղադրյալի և խոսում է պարզի մասին՝ ինչու՞ չի ճառում նաև բաղադրյալի մասին»²² և այլն):

III. Հարցեր, որոնք վերաբերում են բուն արիստոտելյան թեզի բովանդակության հստակեցմանը և իմաստի ճշգրտմանը, արիստոտելյան երկում կիրառվող ուսումնասիրության մեթոդի պարզաբանմանը:

Ինչպես նշել ենք, մեկնվող երկերի հիմնադրույթների իմաստի պարզաբանմանն ու բացահայտմանը, Արիստոտելի կողմից խնդրի քննության սկզբունքներին և եղանակներին է նվիրված Արագոնացու մեկնությունների երկրորդ՝ «Արդ ասէ...» խորագրով սկսվող բաժինը, սակայն դրանից դուրս մնացած հարցերի մի զգալի մաս, հատկապես «Մեկնության մասին» երկին նվիրված աշխատությունում, փոխանցվել են երրորդ՝ «Շուրջ գմասամբս զայս խնդրին...» վերտառությամբ սկսվող հատվածին («Ինչու՞ քանակությանը ոչինչ հակադիր չէ²³», «Ո՞ր եղանակով է <Արիստոտելը> բայը առաջադրում ըստ ստորոգման կամ տեսակի, իսկ գոյականը՝ ըստ ենթակայի կամ նյութի»²⁴ և այլն) և քննվում են այստեղ:

Իմաստասիրական-տրամաբանական գաղափարների և կիրառված մեկնողական հնարների առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև վերոնշյալ հարցադրումներին Արագոնացու տված պատասխանները: Հաշվի առնելով թեմատիկ բազմազանությունն ու գաղափարական լայն ընդգրկումը՝ դիտարկենք Արագոնացու վերլուծությունները՝ ըստ դրանցում կիրառված մեկնաբանության եղանակների բնույթի:

Եվ այսպես, Արագոնացու՝ որպես մեկնիչի առաջնահերթ խնդրին է մեկնվող տրամաբանական երկերի հիմնական գաղափարները հասկանալի, ըմբռնելի դարձնելը, թեկուզև այն պատճառով, որ այդ մեկնությունները կոչված են ծառայել որպես ուսումնական ձեռնարկներ՝ արիստոտելյան տրամաբանության դասավանդման համար: Մեկնաբանության այն եղանակները, որոնք նորովի ներկայացնում, վերաձևակերպում, պարզաբանում, բացատրում, մանրամասնում են մեկնվող բնագրի հիմնադրույթները՝ դրանք ուսումնառողների համար

²² Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերիարմենիաս, էջ 177բ:

²³ Համառոտ վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 66ա:

²⁴ Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերիարմենիաս, էջ 162բ:

հասկանալի և դյուրընկալելի դարձնելու համար, կազմում են մեկնողական հնարների *առաջին խումբը*: Դրանք բազմաթիվ են. Այսպես՝ օրինակ, «Կատեգորիաներ» երկի՝ «Հոմանուն են կոչվում <նրանք>, որոնց անուններն են միայն ընդհանուր» դրույթը ստանում է այսպիսի մեկնաբանություն՝ «Այսինքն՝ նրանք են կոչվում որևէ կատեգորիայում հոմանունաբար ներպարունակված, որոնց անունը՝ որպես կատեգորիա, նույնն է, իսկ գոյացության գաղափարը, այսինքն՝ սահմանումը, տարբեր են»²⁵ և այլն:

Երկրորդ խմբում ներառված մեկնողական հնարները մեկնվող տեքստի մտքերը բացահայտում և ճշգրտում են տեսական հետազոտության այլ՝ «բացահայտող-տեսաբանող» եղանակներով²⁶.

• *Խնդրո առարկա հիմնադրույթի հիմնավորում՝ պարզառների վերհանման միջոցով*:

Այսպես, պատասխանալով այն հարցին, թե ինչու անորոշ բայը նմանապես կարող է ասվել և՛ գոյություն ունեցողի, և՛ գոյություն չունեցողի մասին, սակայն այդպես չէ անորոշ անվան համար, Արագոնացին պատճառաբանում է, որ անորոշ բայը և՛ գոյություն ունեցողի, և՛ գոյություն չունեցողի սոսկ կապն է արտահայտում, այնինչ անորոշ անունը, զրկելով առարկան իր որակությունից, պահպանում է այն որպես գոյացություն, «էակ», ուստի չի կարող ասվել գոյություն չունեցողի մասին²⁷:

• *Արիստոտելյան դիրքորոշման հիմնավորում՝ մեթոդաբանական նպատակահարմարությունը ցուցադրելու միջոցով*:

Այսպես, «Յաղագս անուան» գլխի հարց-պատասխանային բաժնում անդրադառնալով դատողության սուբյեկտի՝ «անուան», «առանց ժամանակի» ասվելու հատկությունը Արիստոտելի կողմից տվյալ տեղում հատուկ քննության առարկա չդարձնելու խնդրին, Արագոնացին մեթոդաբանորեն հիմնավորում է, որ «առանց ժամանակի»-ին պակասություն է, իսկ պակասությունը ճանաչվում է ունակությամբ, այդ իսկ

²⁵ Համառոտ վերլուծություն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 39բ:

²⁶ Ի տարբերություն առաջին խմբի մեկնողական հնարների, որոնց միջոցով պատասխան է տրվում «Ի՞նչ է ասում Արիստոտելը» հարցին, երկրորդ խմբի մեկնողական հնարների միջոցով պատասխան են ստանում նաև՝ «Արիստոտելը ինչո՞ւ, ինչպե՞ս է ասում, ի՞նչ է բխում նրա ասածներից», և թե ինչպիսի առարկություններ (և այդ առարկությունների հերքումներ) կան քննարկվող արիստոտելյան թեզերի վերաբերյալ

²⁷ Տե՛ս Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերիարմենիաս, էջ 169ա:

պատճառով այն նպատակահարմար է ներկայացնել «Բայի մասին» գլխում, որտեղ խոսվում է բայի՝ ժամանակ ունենալու հատկության մասին²⁸:

• *արիստոտելյան տեսակների հիմնավորում՝ մեկնաբանվող երևույթի տրամաբանական առումը վերհանելու ձևով*

Ընդհանրապես, արիստոտելյան երկերի տրամաբանական առումը բոլոր պատեհ առիթներով խիստ կարևորվում է Արագոնացու կողմից: Արագոնացին կարծում է, որ ի տարբերություն մետաֆիզիկոսի, որը դիտարկում է իրերն ինքնին, բացարձակապես, տրամաբանը դիտարկում է իրերը՝ ըստ դրանց ստորոգելի լինելու հատկության: Եվ հենց այս տեսանկյունից պետք է մեկնաբանել հասկացությունները առաջադաս կամ հետադաս կարգելու արիստոտելյան դիրքորոշումները²⁹: Նշված սկզբունքը բազմիցս կիրառվում է Արագոնացու կողմից: Այսպես, «Կատեգորիաներ» երկի նաև կատեգորիայի դասակարգման հետ կապված հիմնախնդիրները քննարկելիս Արագոնացին մեկնաբանում է. «Ասելի է, որ տարբեր կերպ են բաժանում բնական իմաստասերը և բանական <իմաստասերը>, քանի որ բանական <իմաստասերը> տրոհում է ըստ տեսակների, իսկ բնական <իմաստասերը>՝ ըստ նյութի, և քանի որ փիլիսոփան (Արիստոտելը) դասակարգում է այստեղ որպես տրամաբան («գլօջիկոս»), այդ իսկ պատճառով ըստ տեսակի բաժանումը՝ որ է սեռը՝ տեսակների, նախադասում է երկրորդ՝ նյութական բաժանմանը»³⁰:

• *մեկնվող թեզի իմաստի բացահայտում՝ դրա տեսական հիմնավորման՝ հասկացության հնարավոր իմաստների կամ հիմնախնդրի տարբեր տեսանկյունների համակարգային ներկայացման միջոցով:*

Այս մեկնողական հնարը շատ կարևոր գործառույթ ունի մեկնաբանության գործընթացում, քանի որ հարստացնում է մեկնվող բնագիրը բովանդակային իմաստով՝ ներմուծելով ընդհանրական տեսական դրույթներ³¹: Այսպես, քննության առարկա դարձնելով հակա-

²⁸ Տես Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերիարմենիաս, էջ 161բ:

²⁹ Տե՛ս՝ Համառոտ վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 44ա-բ:

³⁰ Նույն տեղում, էջ 61ա-բ:

³¹ Ի դեպ, Արագոնացու մեկնությունների այս ընդհանրական տեսական հիմնադրույթները ստեղծագործաբար յուրացվել և ներառվել են Արիստոտելի երկերի՝ Հովհան Ռ-

դրության՝ չորս տեսակ ունենալու խնդիրը, Արագոնացին առաջադրում է այն ընդհանրական դրույթը, որ ընդհանրապես հակադրությունը կարող է վերաբերել կա՛մ իրողությանը, կա՛մ խոսքին: Եթե այն վերաբերում է խոսքին՝ գործ ունենք հակասության հետ, իսկ եթե՝ իրողությանը, ապա կարող է վերաբերել կա՛մ ըստ իրենց բնույթի միաժամանակ գոյություն ունեցողներին, որին համապատասխանում է հարաբերական («առնչական») հակադրությունը, կա՛մ ոչ միաժամանակ գոյություն ունեցողներին: Այս վերջիններս կարող են լինել կա՛մ փոխբացառող՝ «ներհակ» հակադրություն, կա՛մ ոչ փոխբացառող՝ «պակասական» հակադրություն: Այդ իսկ պատճառով «հակադրությունները ոչ ավելին են և ոչ սակավ»³²:

• *մեկնվող թեզի իմաստի բացահայտում՝ հասկացության հնարավոր իմաստները կամ հիմնախնդրի տարբեր տեսանկյունները դիտելով դիալեկտիկական փոխհարաբերության մեջ*

Մեկնաբանության այս տիպը նախ ներկայացնե՞ք հարացույցօրինակով: «Մեկնության մասին» երկին նվիրված աշխատության հարցուպատասխանային բաժնում Արագոնացին քննարկում է արիստոտելյան՝ «իմացմունքը նույնն է բոլորի մոտ» դրույթին հակասող այն թեզը (Արիստոտելի «Հոգու մասին» երկից), ըստ որի՝ «ի տարբերություն զգայության, որն առաջանում է զգայարանների վրա ազդելուն պես, իմացությունը կապված է երևակայության և կամքի հետ, հետևաբար չի կարող նույնը լինել բոլորի մոտ» և առաջադրում է այսպիսի պատասխան. «Իմացությունը՝ ըստ այնմ, որ հոգու վրա ներգործության <արդյունք> է՝ նույնը չէ բոլորի մոտ, այլ ըստ այնմ, որ իրողությունների նմանությունն ու կրումն է՝ նույնն է բոլորի մոտ»³³: Այսպիսի՝ «և՛... և՛...» դիալեկտիկական մոտեցմամբ մեկնաբանությունները բազմիցս են հանդիպում Արագոնացու մեկնողական աշխատություններում:

Այս երկրորդ՝ տեսական-հետազոտական բնույթի մեկնաբանության եղանակների բազմակի կիրառումները Արագոնացու կողմից վկայում են, որ Արիստոտելի երկերի նրա մեկնությունները, որպես

րոտնեցու մեկնություններում: Այդ մասին մանրամասն տես՝ Մինասյան Ա., Հովհան Ռոտնեցին՝ Արիստոտելի երկերի մեկնիչ, Ե., 2004, էջ 41-44:

³² Համառոտ վերլուծություն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 94բ:

³³ Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերիարմենիաս, էջ 158ա-բ:

դասագիրք գործածվելով արիստոտելյան ձևական տրամաբանության դասավանդման գործընթացում, նաև ունեցել են նշանակալից գիտահետազոտական նշանակություն, քանի որ, նշված մեթոդների կիրառության շնորհիվ, բացահայտել են իմաստասիրական նորանոր շերտեր տրամաբանական գիտության բնագավառում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատությունները, որոնք հայերեն են թարգմանվել V դարի վերջերին – VI դարի սկիզբներին, բազմիցս մեկնվել են միջնադարյան հայ մտածողների կողմից և դասավանդվել են Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հոդվածում ուսումնասիրվում են արիստոտելյան երկերին նվիրված՝ կաթոլիկ քարոզիչ Պետրոս Արագոնացու մեկնությունների (XIV դար) առանձնահատկությունները, վեր են հանվում մեկնաբանության այն եղանակներն ու մեխանիզմները, որոնք կիրառել է լատին մեկնիչն իր աշխատություններում: Մեկնություններում Արագոնացին ոչ միայն սոսկ բացատրում և հասկանալի են դարձնում մեկնվող բնագրերը, այլև դրանցում բացահայտում է իմաստասիրական-տրամաբանական թաքնված շերտեր, առաջադրում է մի շարք նոր տեսական հիմնավորումներ, ներկայացնում և հերքում է Արիստոտելի տրամաբանական հիմնադրույթներին վերաբերող առարկություններն ու ընդդիմախոսությունները:

Բանալի բառեր. միջնադարյան հայ փիլիսոփայություն, Արիստոտել, ձևական տրամաբանություն, հասկացություն, դատողություն, մեկնություն, մեկնաբանության եղանակ:

ЭКЗЕГЕТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ТОЛКОВАНИЙ ПЕТРА АРАГОНСКОГО ЛОГИЧЕСКИХ ТРУДОВ АРИСТОТЕЛЯ

Минасян Ануш

*Кандидат философских наук, доцент,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

Сочинения Аристотеля “Категории” и “Об истолковании” были переведены на армянский язык в конце V – начале VI вв., они неоднократно комментировались средневековыми армянскими мыслителями и преподавались в высших учебных заведениях Армении. В статье рассматриваются особенности интерпретирования католического проповедника Петра Арагонского (XIV век), посвященных аристотелевским трудам, выделяются методы и механизмы экзегезы, которые использовал латинский комментатор в своих произведениях. В толкованиях Арагонский не только объясняет и уточняет исходные тексты, но и выявляет в них скрытые логические – философские пласты, выдвигает ряд новых теоретических обоснований, излагает и опровергает возражения, связанные с основными логическими положениями Аристотеля.

Ключевые слова: средневековая армянская философия, Аристотель, формальная логика, понятие, суждение, интерпретация, способы экзегезы.

EXEGETICAL PECULIARITIES OF THE INTERPRETATIONS OF PETER OF ARAGON OF ARISTOTLE'S LOGICAL WORKS

Minasyan Anush

*Candidate of Philosophical Sciences, Associate Professor,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

Aristotle's works "Categories" and "On Interpretation" were translated into Armenian in the late V-early VI centuries, they were numerously interpreted by medieval thinkers, and taught in higher educational institutions of Armenia. The article discusses the peculiarities of the interpretation of the Catholic preacher Peter of Aragon (XIV century), dedicated to Aristotle's works, highlights the methods and mechanisms of exegesis that the Latin commentator used in his works. In his interpretations, Peter of Aragon not only explains and clarifies the original texts, but also reveals hidden logical and philosophical layers in them, puts forward a number of new theoretical justifications, sets out and refutes objections related to the basic logical propositions of Aristotle.

Key words: medieval Armenian philosophy, Aristotle, formal logic, concept, proposition, interpretation, methods of exegesis.